

# Ֆիսկալ ապակենտրոնացումը որպես տարածքների ներառական զարգացման գործոն\*

Մարգարյան Անդրանիկ Ա.

Կիրառական տնտեսագիտության ամբիոնի ասպիրանտ,

Տնտեսագիտական ֆակուլտետ,

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-3692-3259>

[a.margaryan.15@mail.ru](mailto:a.margaryan.15@mail.ru)

ՀՏԳ՝ 334; 338; EDN: AMWRXQ; JEL: H20; H22; H71; H72

DOI: 10.58587/18292437-2025.1-209

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ ֆիսկալ ապակենտրոնացում, պետական բյուջե, եկամտային հարկ, գույքահարկ, դոտացիա, մասհանում, սուբսիդիա

## Фискальная децентрализация как фактор инклюзивного развития территорий

Маргарян Андраник А.

аспирант кафедры прикладной экономики экономического факультета,

Армянский государственный экономический университет (Ереван, РА)

**Аннотация.** В статье рассматриваются вопросы фискальной децентрализации в Республике Армения в контексте вопросов инклюзивного и справедливого развития территорий. Анализ показывает, что львиную долю бюджетов местных органов власти составляют средства, формируемые за счет налога на имущество, а также субсидии из государственного бюджета. По результатам анализа установлено, что поступления доходов в местные бюджеты формируются, по сути, стихийно и не связаны со стимулированием предпринимательской активности крупных, средних и малых предприятий, расположенных на территории населенных пунктов, и возможными отчислениями из их доходов. На основе анализа международного опыта в работе даны рекомендации по совершенствованию системы фискальной децентрализации в Республике Армения.

**Ключевые слова и словосочетания:** фискальная децентрализация, государственный бюджет, подоходный налог, налог на имущество, грант, вычет, субсидия

## Fiscal decentralization as a factor of inclusive development of territories

Margaryan Andranik A.

Postgraduate student of the Department of Applied Economics, Faculty of Economics,

Armenian State University of Economics (Yerevan, RA)

**Abstract.** The article discusses the issues of fiscal decentralization in the Republic of Armenia in the context of issues of inclusive and balanced development of territories. The analysis shows that the overwhelming share of the budgets of local self-government bodies is made up of funds generated from property taxes, as well as subsidies from the state budget. According to the results of the analysis, the income receipts of local budgets are essentially formed spontaneously and are not connected with the stimulation of business activity of large, medium and small enterprises located in communities and possible deductions from their income. Based on the analysis of international experience, the work makes recommendations for improving the fiscal decentralization system in the Republic of Armenia.

**Keywords & phrases:** fiscal decentralization, state budget, income tax, property tax, grant, deduction, subsidy

### Ներածություն

Որևէ երկրի տնտեսության համաչափ զարգացման խնդիրը սերտորեն առնչվում է հարկաբյուջետային քաղաքականության ֆունկցիոնալ (ուղղահայաց) և տարածական (հորիզոնական) բաղադրիչների ողջամիտ համադրության հետ: Պետական բյուջեի կենտրոնացված բաշխման դեպքում միշտ չէ, որ ապահովվում է երկրի տարածքային միավորների համամասնական ու ներդաշնակ զարգացումը: Այս հիմնախնդիրը հատկապես սուր է տարած-

քով մեծ ու կառավարման տեսակետից բարդ երկրների համար: Այդուհանդերձ, փոքր տարածք ունեցող երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար, այս խնդիրը ևս արդիական է: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ շարունակ անհրաժեշտություն է առաջանում վերանայել և կատարելագործել համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության շրջանակներում գտնվող հարկատեսակների, տուրքերի և զանձվող պարտադիր վճարների կազմը,

\* Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 23AA-5B025 ծածկագրով թեմայի շրջանակներում:

կառուցվածքը, դրույքները, շատ դեպքում ներդնել պարտադիր գանձման ենթակա այլ հարկատեսակներ, ելնելով տեղական կամ համապետական այս կամ այն նշանակության խնդիրների լուծման անհրաժեշտությունից: Իսնդիրը վերաբերում է ոչ միայն անշարժ և շարժական գույքից, հողային միավորներից և սեփականության այլ օբյեկտներից գանձվող հարկերին, այլև բիզնեսից և անձնական եկամուտներից գանձվող հարկերին:

### **Գրականության ակնարկ**


Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն չունեն միասնական մոտեցումներ ֆիսկալ կենտրոնացման և ապակենտրոնացման գործընթացների վերաբերյալ, քանզի եկամուտների առավելապես ուղղահայաց և հորիզոնական սկզբունքների վրա հիմնված բաշխման արդարության վերաբերյալ ընկալումները, գնահատումները և համապատասխանաբար՝ արդյունավետ քաղաքականության մշակման տարբերակները հաճախ հիմնված են սուբյեկտիվ մոտեցումների ու չափանիշների վրա: Երբեմն այդ որոշումները միջնորդավորված են քաղաքական, խմբային, էթնիկական և տարաբնույթ այլ շահերով, այդ պատճառով դժվար է միանշանակ առանձնացնել ֆիսկալ ապակենտրոնացման այն օպտիմալ սահմանագիծը, որով հնարավոր լինի լավագույնս բաշխել ստեղծված ընդհանուր հասարակական եկամուտը կենտրոնի և տեղական (տարածքային) միավորների միջև:

Այդուհանդերձ, տնտեսագիտական գրականության մեջ առկա դասական մոտեցման համաձայն՝ ֆիսկալ ապակենտրոնացման պարագայում տեղական ինքնակառավարման մարմիններին հատկացվում են այնքան միջոցներ, որքան անհրաժեշտ են ամբողջ ծավալով իրենց վերագրված լիազորությունները և գործառույթները իրականացնելու համար [1, էջ 1121]: Մակայն կա հակառակ տեսակետ, ըստ որի պետական միջամտությունը տնտեսությանը խիստ անարդար է անկախ նրանից, թե այն խիստ կենտրոնացված, թե՞ ապակենտրոնացված բնույթ ունի [2, էջ 139]: Այսօրինակ տեսակետներ ունեն նաև, Մասգրեյվը [3, էջեր 89-90], և Տիբուն [4, էջեր 416-417]: Մյուս կողմից, տեսաբանների մեկ այլ խումբ պնդում է, որ ֆիսկալ ապակենտրոնացումը կարող է վատթարացնել համայնքային կյանքի սոցիալ

տնտեսական պայմանները, եթե երկրում առկա են թույլ ինստիտուցիոնալ կարգավորումներ, քաղաքական կոնֆլիկտներ և կոռուպցիա [5]: Մասնավորապես, Անիֆը և մյուսները այն տեսակետն են հայտնում, որ եթե երկրում առկա են թույլ ինստիտուտներ, քաղաքական անկայունություն և կոռուպցիա, ապա ֆիսկալ ապակենտրոնացումը նպաստում է տնտեսական աճի դանդաղմանը [6, էջ 1]: Իր հերթին Կիրիակուն և մյուսները պնդում են, որ կենտրոնացված պետական կառավարման բարձր որակի դեպքում ֆինանսական ապակենտրոնացումը նպաստում է տարածքային տարբեր միավորների միջև զարգացման մակարդակների զուգամիտման (կոնվերգենցիայի) խորացմանը [7, էջ 89]: Նույնանման մոտեցումներ են զարգացնում Արիֆը և Ահմեդը, որոնք նշում են, որ ֆիսկալ ապակենտրոնացումը նպաստում է տնտեսական աճին այն երկրներում, որոնցում առկա է օրենքի գերակայությամբ բնութագրվող ուժեղ ինստիտուցիոնալ կառուցվածք, կոռուպցիայի ցածր մակարդակ, հաշվետվողականություն և տանելի բյուրոկրատական միջավայր [8, էջ 3]: Տեսաբանների մի խումբ դրական կոռեկցիոն կապ են տեսնում ֆիսկալ ապակենտրոնացման և տեխնոլոգիական նորամուծությունների զարգացման միջև [9, էջ 1]: Այս համատեքստում, որոշ հետազոտողներ առանձնացնում են ֆիսկալ ապակենտրոնացման և բնապահպանական տեսակետից անվտանգ տեխնոլոգիական նորարարությունների զարգացման միջև առկա կապերը [10]:

### **Վերլուծություն**

Հարկաբյուջետային քաղաքականության ներառականության հենապուններից է ոչ միայն քաղաքականության ազդակների և ազդեցությունների՝ անհատական, այլև տարածական մակարդակով բաշխումը: Այս առումով, անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ-ում հարկաբյուջետային (ֆիսկալ) ապակենտրոնացման մակարդակը և սույն հիմնախնդրի կարգավորմանն ուղղված մեխանիզմների ներդրման և կիրարկման հնարավորությունները: Եթե դիտարկենք ՀՀ 1000 խոշոր հարկատուների կողմից վերջին տարիներին Պետական բյուջե վճարված հարկերի տարածական բաշխումը, ապա ակնառու է ՀՀ-ում հարկազանձման և տնտեսական ակտիվության խիստ բևեռացումը և ոչ ներառական բնույթը (տես գծապատկեր 1):




**Գծապատկեր 1.** ՀՀ 1000 խոշոր հարկատուների կողմից վճարված հարկային եկամուտների տարածական բաշխումն ըստ մարզերի 2022-2024 թթ.:

Կազմվել է հեղինակի կողմից: Աղբյուրը՝ [11]:

Գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ ՀՀ-ում հարկային եկամուտների գերակշիռ մեծամասնությունը գեներացվում և գանձվում է Երևանում՝ 2024 թ.-ի դրությամբ շուրջ 82%: Երևանին հաջորդում է Սյունիքի մարզը՝ 2024 թ.-ի դրությամբ շուրջ 7%, որից եթե գտենք ՀՀ խոշորագույն հարկ վճարող կազմակերպության՝ Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատից գանձված հարկային մուտքերը, ապա մարզային մասնաբաժինը կնվազի ընդհուպ մինչև 1.3 % ընդհանուր հարկային եկամուտներում: Կարևոր է ուշադրություն դարձնել նաև այն հանգա-

մանքին, որ վերջին տարիներին հարկային եկամուտների կենտրոնացման մակարդակը շարունակաբար աճել է:


Չուգահեռաբար, եթե վերացարկվենք պետական բյուջեից և վերլուծենք համայնքային բյուջեների կառուցվածքը, ապա խնդիրներն այս համատեքստում էլ ավելի ցցուն են: Մասնավորապես՝ համայնքային բյուջեների եկամտային կառուցվածքից ակնհայտ է դառնում պետական բյուջեի հասկացումներից խիստ կախվածության հանգամանքը (տես գծապատկեր 2):



**Գծապատկեր 2.** ՀՀ համայնքային բյուջեների եկամտային կառուցվածքը և շարժընթացը 2010-2023 թթ.-ին:

Կազմվել է հեղինակի կողմից: Աղբյուրը՝ [12]:

Դիտարկվող ժամանակահատվածում համայնքի եկամտային աղբյուրների միջինում շուրջ 47.6%-ը կազմում են պետական բյուջեից հատկացումները<sup>1</sup>, իսկ հարկային եկամուտներն ունեն համեմատաբար համեստ մասնաբաժին՝ միջինում՝ 20.8%: Ի դեպ, հարկային եկամուտների կշիռն ընդհանուր եկամուտներում վեջին տասնամյակում գրեթե չի փոփոխվել, նույնիսկ 2010 թ.-ի համեմատ 2024 թ.-ին նվազել է 1.8 %-ային կետով: Բնականաբար, այս խնդիրն առավել դետալային ախտորոշելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել համայնքային բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը (տես գծապատկեր 3):



**Գծապատկեր 3.** ՀՀ համայնքային բյուջեների ընդհանուր հարկային եկամուտների և գույքահարկի շարժընթացը 2010-2023 թթ.-ին  
Կազմվել է հեղինակի կողմից: Աղբյուրը՝ [12]:

Վերլուծությունը<sup>2</sup> փաստում է, որ ընդհանուր բյուջետային եկամուտներում առանց այդ էլ փոքր մասնաբաժին ունեցող հարկային եկամուտների կառուցվածքը ևս խնդրահարույց է: Մասնավորապես՝ կարելի է նկատել, որ դիտարկվող տասնամյակի ընթացքում գույքահարկի կշիռը կազմել է միջինում 83%, ինչը խնդրահարույց է այն առումով, որ սույն հարկատեսակը իր բնույթով հանդիսանալով ուղղակի հարկ, այնուամենայնիվ փոխկապակցված չէ տնտեսական ակտիվությանը և մեծ հաշվով չի նպաստում համայնքային տնտեսական ակտիվության համար լրացուցիչ խթանների ստեղծմանը: Իհարկե, Հարկային օրենսգրքով նախատեսված գույքահարկի պրոգրեսիվ սանդղակը, ինչպես նաև շուկայականին մոտ կադաստրային արժեքի սահմանման մոտեցումները [13, հոդված 229] միջնաժամկետում էականորեն կարող են բարելավել սույն հարկատեսակի մասով բյուջետային մուտքերը: Չուզահեռաբար, այս մեխանիզմները հնարավորություն կտան առավել բարվոք գույքային կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար սահմանել համամասնորեն բարձր հարկային բեռ, յուրահատուկ կերպով տարբերակելով և պրոգրեսիվություն հաղորդելով այդ հարկատեսակին: Այնուամենայնիվ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ տվյալ հարկատեսակը մեծ հաշվով ուղղակիորեն կապված չէ տնտեսական ակտիվության հետ և չի կարող լուծել, դիցուք, զբաղվածության և մունիցիպալ մակարդակով ձեռնարկատիրական գործունեության խթանման խնդիրները:

Այս համատեքստում, կարևոր է ուսումնասիրել հարկաբյուջետային ապակենտրոնացման միջազգային հաջողված փորձը և ՀՀ-ում ներդրման հնարավորությունները (տես աղյուսակ 1):

<sup>1</sup> Սույն վերլուծության խնդիրների նպատակադրմամբ պայմանավորված՝ պետական բյուջեից հատկացումները ներառում են Համայնքային բյուջեների հաշվետվությունների՝ Կառավարման այլ մակարդակներից ստացված ընթացիկ և կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ տողերը:

<sup>2</sup> Սույն վերլուծության խնդիրների նպատակադրմամբ պայմանավորված՝ գույքահարկը ներառում է ներկայիս հարկային օրենսդրությամբ սահմանված անշարժ գույքի հարկը, որը ներառում է նախկինում որպես առանձին հարկատեսակ հաշվառվող հողի հարկը, ինչպես նաև փոխադրամիջոցների գույքահարկը: Ժամանակային շարքերը բերված են համադրելիության վերոնշյալ սկզբունքով:

**Աղյուսակ 1. Հարկաբյուջետային ասպակներն ապահովող մեխանիզմների միջազգային փորձի վերլուծությունը [15]**

Երկիր	Հարկերի մասհանումներ համայնքների բյուջեին՝ պետական բյուջեից	Դոտացիաների համակարգ
<b>Լեհաստան</b>	Նախատեսված են մունիցիպալ բյուջեների սեփական եկամուտներ, որն իր հերթին բաղկացած է տեղական հարկերից, եկամտահարկի և շահութահարկի մասհանումներից՝ տարբերակված մասնաբաժիններով ըստ մունիցիպալ միավորների (սեփական եկամուտների մոտ 59%-ը):	Համահարթեցման գրանտների հաշվարկի բանաձևը հիմնվում է մեծամասամբ մունիցիպալ միավորի՝ հարկային եկամուտներ գներացնելու կարողության, ավելի ցածր կշռով՝ բնակչության խտության, գործազրկության և այլ սպեցիֆիկ ռեզիդնայ գործոնների վրա՝ ինչպիսիք են ենթակառուցվածքների առկայությունը և այլն: Ընդհանուր մունիցիպալ եկամուտներում պետական բյուջեից հատկացված միջոցների կշիռը կազմում է մոտ 59%:
<b>Չեխիա</b>	Չեխիայի օրենսդրությունը նախատեսում է նաև ԱԱՀ մասհանումներ, որը կազմում է ընդհանուր մունիցիպալ եկամուտների շուրջ 40%-ը:	Չեխիայում մունիցիպալ միավորները պատասխանատու են տեղական ճանապարհաշինության, նախակրթական և հիմնական դպրոցական կրթության, հանրային տրանսպորտի, ինչպես նաև այլ գործառնությունների համար, որոնց ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվող համահարթեցման գրանտները կազմում են մունիցիպալ ընդհանուր եկամուտների 42%-ը, որը ցածր է ԵՄ միջին ցուցանիշից:
<b>Հունգարիա</b>	Օրենսդրությունը նախատեսում է տեղական բիզնեսի հարկի սահմանում համախառն կորպորատիվ շահույթի նկատմամբ: Վերջինիս հարկադրույքը որոշում է մունիցիպալ մարմինը՝ առավելագույնը 2% վերին շեմով: Այն կազմում է ընդհանուր տեղական հարկերի շուրջ 80%-ը:	Գործում է համահարթեցման գրանտների 3 հիմնական տեսակ՝ նորմատիվ գրանտ, որոնք տրամադրվում են հիմնականում կրթության, սոցիալական պաշտպանության և մշակույթի ոլորտներում, համահարթեցման գրանտ, որը նախատեսված է աղքատ տարածաշրջանների խնդիրները հասցեագրելու համար, ինչպես նաև դեֆիցիտը ֆինանսավորելու համար նախատեսված գրանտներ, որոնք հիմնականում տրվում են էկզոգեն պատճառներով առաջացած եկամուտների դեֆիցիտը ֆինանսավորելու նպատակով: Պետական բյուջեից հատկացումները կազմում են մունիցիպալ միավորների եկամտի 52%-ը:
<b>Սլովենիա</b>	Եկամտային հարկը հավաքագրվում է կենտրոնական կառավարության կողմից, այնուհետև մասհանումներ են կատարվում մունիցիպալ բյուջեներ՝ ըստ եկամուտներ գներացնելու կարողության, ինչպես նաև ծախսային կարիքների: Նշված մասհանումները կազմում են մունիցիպալ բյուջետային եկամուտների շուրջ 55%-ը:	Դոտացիաները կազմում են ընդհանուր եկամուտների 39%-ը, որը ցածր է ԵՄ միջին ցուցանիշից:

<p><b>Լատվիա և Իսլանդիա</b></p>	<p>Կիրառվում է համահարթեցման մեխանիզմ, որը լրացուցիչ կերպով վերաբաշխում է տեղական մակարդակում ձևավորվող եկամուտները համայնքների միջև այնպես, որ բոլորը հնարավորություն ունենան իրականացնելու օրենքով սահմանված իրենց գործառնությունները: Լատվիայում Տեղական կառավարության ֆինանսական համահարթեցման ֆոնդին վճարումներ են կատարում այն մունիցիպալ միավորները, որոնց՝ եկամտային հարկի և անշարժ գույքի հարկի հավաքագրումները գերազանցում են ծախսային կարիքները շուրջ 10%-ով: Նման մեխանիզմի կիրառման արդյունքում՝ Լատվիայում մունիցիպալ բյուջեների մոտ 61%-ը կազմում են հարկային մասհանումները, Իսլանդիայում՝ եկամտային հարկի մասհանումները՝ շուրջ 63%:</p>	<p>Պետական բյուջեից տրամադրվող միջոցների մասնաբաժինը ընդհանուր եկամուտներում կազմում են համապատասխանաբար 32% և 11%-ը, ինչն էականորեն ցածր է ԵՄ միջին ցուցանիշից, ինչը Տեղական կառավարության ֆինանսական համահարթեցման ֆոնդերի և մեխանիզմների հաջող կիրառման տիպիկ օրինակ է:</p>
---------------------------------	---	--

Վերը նշված օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ եվրոպական երկրներում տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ինքնաբավության հարցում յուր ղեր ունեն ոչ միայն կենտրոնական կառավարության կենտրոնացված բյուջետային հատկացումները՝ դոտացիաների, լրավճարների, համաֆինանսավորումների, տարբեր ծրագրերի սուբսիդավորումների տեսքով, այլև համապետական նշանակության տարատեսակ հարկերից որոշակի մասհանումներից գոյացող միջոցները: Հատկապես, զգալի մասաբաժին ունեն եկամտահարկի և շահութահարկի գծով տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներին կատարվող մասհանումները:

**Եզրակացություններ**

Հաշվի առնելով ֆիսկալ ապակենտրոնացման բնագավառում հայաստանյան իրավիճակը, համապատասխան միջազգային փորձի վերլուծությունը, ինչպես նաև Հայաստանում սույն հիմնախնդրի խիստ արտահայտված բնույթը համայնքների ինքնուրույնությունը բարձրացնելու տեսակետից, կարող ենք առաջարկել առավել հասցեական և կոնկրետ գործիքներ, որոնք կունենան զարգացման ընդգծված շեշտադրում: Այդ տեսակետից անհրաժեշտ է.

✓ Սուբվենցիաների, դոտացիաների և լրավճարների համար նախատեսված ռեսուրսը կապել տնտեսական ակտիվությանը և ուղղել զարգացման նպատակներին: Վերջին տարի-

ներին բազմակի ավելացած սուբվենցիաները ներկայումս կապված են համայնքների կարիքների և նախաձեռնողականությանը: Այնուամենայնիվ, այս մոդելը երկարաժամկետում խնդիրների է բախվելու, քանի որ պահանջը առաջանցիկ է դառնում ռեսուրսներից: Կարծում ենք, սուբվենցիաների մեխանիզմները մասնակիորեն կարող է փոխարինվել համայնքում գործող կազմակերպությունների եկամտային հարկից, շահութահարկից կատարվող մասհանումներով տարբերակված գործակիցներով ըստ սահմանվող առաջնահերթությունների, որը կարող է օգտագործվել միայն կապիտալ բնույթի ծախսերի համար (կարող են ներառվել նաև զարգացմանը նպաստող այլ, օրինակ՝ էկոլոգիական ծրագրերի իրականացման ծախսերը): Ի դեպ այս մեխանիզմը եկամտային հարկից, շահութահարկից, բնապահպանական վճարներից և ռոյալթիներից մասհանումների մասով արդեն իսկ նախատեսված է Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, սակայն դեռևս գործնականում չի կիրառվում, քանի որ յուրաքանչյուր տարի մասհանումների համամասնությունը պետք է սահմանվի Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով [14, հոդված 86, մաս 1, կետ 1], իսկ վերոնշյալը արդեն իսկ խնդրահարույց է համայնքների ինքնավարության և ապակենտրոնացման տեսանկյունից, քանի որ յուրատեսակ կոնֆլիկտի մեջ է դնում կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների



«շահերը»: Վերջինս կկապակցի եկամտային կարողությունը տնտեսական ակտիվությանը և կարող է երկարաժամկետ ինստիտուցիոնալ լուծում դառնալ սուբվենցիոն ռեսուրսների բաշխման համար:

✓ Ընդլայնել համայնքների եկամտային բազան չօգտագործվող արտադրական գույքի լրացուցիչ հարկմամբ: Վերջինս խթաններ կստեղծի առկա «սառեցված» կապիտալի ակտիվացման համար և դրական տնտեսական ազդեցություններ կարող է ունենալ: Այնուամենայնիվ, նման մեխանիզմի կիրառման համար խիստ կարևորվում է արդյունավետ վարչարարությունը՝ բացառելու դրա կիրառումը ֆիզիկապես և բարոյապես մաշված գույքի նկատմամբ, որտեղ համայնքային իշխանությունների մասնակցությունը դրանց ճիշտ ճանաչման տեսակետից կարևոր է:

✓ Երկարաժամկետում, աստիճանաբար անցնելով մասհանումների առավել լիարժեք մեխանիզմի, կարող է արդեն կիրառվել նաև համահարթեցման գործիքներ (Լատվիայի և Իսլանդիայի օրինակով)՝ առավել բարձր եկամուտներ ունեցող համայնքներից ռեսուրսների մի մասն ուղղելով ավելի ցածր եկամուտներ ունեցող համայնքների, միաժամանակ այնպես, որ չխեղաթյուրվեն տնտեսական խթանները: Վերջինս ի վերջո կարող է փոխարինել դոտացիաների մեխանիզմին:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. **Oates W. E.** (1999). An Essay on Fiscal Federalism // Journal of Economic Literature. – Vol. 37(3). P. 1120-1149.
2. **Nozick, Robert** (2013). Anarchy, State, and Utopia. Basic Books.
3. **Musgrave R. A., Musgrave P. B.** Public Finance in Theory and Practice. Fifth Edition. Singapore: McGraw-Hill Book. Co, 1989. P. 87—107.
4. **Tiebout C.** A Pure Theory of Local Expenditures // The Journal of Political Economy. 1956. Vol. 64. N 5. P. 416—424.

5. **Pinilla-Rodríguez, D. E., & Hernández-Medina, P.** (2024). Governance and Fiscal Decentralisation in Latin America: An Empirical Approach. *Economies*, 12(8), 207. <https://doi.org/10.3390/economies12080207>
6. **Hanif, Imran, Sally Wallace, and Pilar Gago-de-Santos.** (2020). Economic growth by means of fiscal decentralization: An empirical study for federal developing countries. *Sage Open* 10: 1–12
7. **Kyriacou, Andreas P., Leonel Muinelo-Gallo, and Oriol Roca-Sagalés.** (2015). Fiscal decentralization and regional disparities: The importance of good governance. *Papers in Regional Science* 94: 89–107
8. **Arif, Umaima, and Eatnaz Ahmad.** (2020). A framework for analysing the impact of fiscal decentralization on macroeconomic performance, governance and economic growth. *The Singapore Economic Review* 65: 3–39:
9. **Liu, L., & Zhang, W.** (2023). Fiscal decentralisation and technological innovation efficiency in China: an efficiency decomposition perspective. *Technology Analysis & Strategic Management*, 36(11), 1–14. <https://doi.org/10.1080/09537325.2023.2224892>.
10. **Zhu, Y., Zhou, X., Li, J., & Wang, F.** (2022). Technological Innovation, Fiscal Decentralization, Green Development Efficiency: Based on Spatial Effect and Moderating Effect. *Sustainability*, 14(7), 4316. <https://doi.org/10.3390/su14074316>.
11. ՀՀ ՊԵԿ տվյալների բազաներ: <https://www.src.am/am/getMenusContents/120>.
12. ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների բազաներ: [https://minfin.am/hy/page/hamaynqi\\_byujei\\_hashve\\_tvutyunner/](https://minfin.am/hy/page/hamaynqi_byujei_hashve_tvutyunner/)
13. «ՀՀ հարկային օրենսգիրք» <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>
14. «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք» <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150060>
15. Division of Powers <https://portal.cor.europa.eu/divisionpowers/Pages/Compare.aspx?pol=Fiscal+Powers&c1=Poland&c2=Georgia>

Տճան/Հանձնվել է՝ 05.02.2025  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 12.02.2025  
 Принята/Ընդունվել է՝ 19.02.2025